թեան պետի միտքը, ինքն եւս խորամանկութեամբ հաստատեց նրա ասածը.

— Այո՛, այո՛, պարոն բժշկապետը մեր նահանգում մեր պատոելի հիւրն է: Մենք պէտք է ամէն հնարներ գործ դնենք՝ դիւրացնելու նրա ուղեւորութիւնը եւ ամէն վտանգից ապահովելու, թէեւ այդ մեր նահանգում պատահել չէ կարող:

— Շնորհակալ եմ ձեր ուշադրութեան համար, վսեմաշուք տէր, — ասաց Ասլանը հեռոից գլուխ տալով: — Դուք այնքան բարի էք եւ այնքան ողորմած գտնոեցաք դէպի ինձ, որ ես մինչեւ անգամ պէտք չունեցայ Արզրումի նահանգապետի յանձնարարական նամակը առաջուց ներկայացնել ձեզ, տեսնելով, որ դուք, առանց յանձնարարականի եւս, ցոյց էք տալիս ամէն պատրաստականութիւն օգնելու ինձ:

Փաշայի մսուտ երեսի վրայ երեւաց ապշութեան նման մի բն: Նա, ծածկելով իր խռովութիւնը եւ կեղծ ուրախութիւն ցոյց տալով, բացագանչեց.

— Միթէ՞: Ա՛խ, պարոն բժշկապետ, դուք չափազանց համեստ էք գտնոել, դուք զրկել էք ինձ իմ բարեկամի նամակից. Արզրումի նահանգապետը իմ ամենալաւ բարեկամն է:

— Այդ նամակը ես պահել էի, որ այստեղից մեկնելու միջոցին յանձնեմ ձեզ, — ասաց Ասլանը իր թղթապահի միջից մի փոքրիկ նամակ դուրս բերելով: — Բայց որովհետեւ խօսք եղաւ, ես այս րոպէում կը յանձնեմ ձեզ:

— Խնդրեմ, խնդրեմ, — բացագանչեց փաշան եւ առեց նամակը:

Փաշան լսելի ձայնով կարդաց հետեւեալ տողերը. —

«Այս նամակը Ձեզ ներկայացնող ֆրանսիացի երեւելի բնագէտ եւ բժշկապետ պարոն Քարլ Ռիսմանը իր ուսումնական հետազօտութիւնների համար անցնելու է Վան քաղաքով դէպի Բաղդադ, իսկ այնտեղից՝ Հնդկաստան: Յուսով եմ, որ, կատարելով իմ խնդիրքը, Դուք այնքան բարի կը լինէք, ողորմած տէր, որ նրա ուղեւորութեան համար կը տնօրինէք բոլոր պարտ ու պատշաճ կարգադրութիւնները, որպէսզի գիտնական ճանապարհորդը դիւրութիւններ ունենայ թէ՛ իր նպատակին հասնելու եւ թէ՛ իր ուղեւորութեան ժամանակ հանգիստ ու ապահով լինելու: Որի համար կը մնամ Ձեզ միշտ շնորհապարտ» եւ այլն:

— Բարեկամս հենց իր ձեռքովն է գրել, — ասաց փաշան նամակը կարդալուց յետոյ: — Ես պատրաստ եմ ամէն կերպով դիւրացնել ձեր ուղեւորութիւնը, պարոն բժշկապետ: